

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2024 թ. հունիսի 10-ին կայացած թիվ 16 նիստի**

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2024 թ. հունիսի 10-ին կայացած թիվ 16 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից նիստին մասնակցել են 23-ը: Նախագահողը քվեարկության դրեց օրակարգը և այն հաստատվեց միաձայն:

**Օրակարգում.**

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան (2023-2024 ուս. տարի) ատեստավորման հարցը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերպված մրցույթներին հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը:
  - ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» միջազգային մրցույթ:
  - ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերպված գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթ:
  - ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերպված գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթ:
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան (2023-2024 ուս. տարի) ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, առկա ուսուցմամբ ասպիրանտները և գիտական ղեկավարները:

Ասպիրանտները գիտխորհրդի անդամներին ներկայացրեցին հաշվետու տարվա ընթացքում իրենց կատարված աշխատանքները, ինչից հետո արտահայտվեցին ասպիրանտների գիտական ղեկավարները, ներկայացնելով իրենց կարծիքները:

Ստորև ներկայացվում է ատեստավորվող ասպիրանտների ցուցակը և նրանց կողմից կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:

1. Ռուզաննա Արսենի Շուշանյան - մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյան:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են առնետների գլխուղեղի և թոքերի իմունոհիստոքիմիական, կենսաքիմիական և ֆլյուորեսցենտային հետազոտություններ՝ փորձարարական հիպոքսիայի պայմաններում, որոնց արդյունքների հիման վրա տպագրվել է 1 հեղինակային հոդված՝ տեղական ամսագրում (*Proceedings of the YSU, Chemistry and Biology*), 2 հոդված՝ Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ինդեքսավորվող միջազգային ամսագրերում (*Acta Histochemica, Q3 quartile; Respiratory Physiology & Neurobiology, Q2 quartile*): Եվս մեկ հոդված նախապատրաստվում է գրախոսման ներկայացման համար (*Morphologie, Q3 quartile*): Հրատարակված հոդվածները ներկայացված են ստորև.

- R. Shushanyan, A. Grigoryan, T. Abgaryan, A. Karapetyan, Histological and cytochemical analysis of the brain under conditions of hypobaric hypoxia-induced oxygen deficiency in albino rats, *Acta Histochemica*, 2023, 125 (8), 152114. <https://doi.org/10.1016/j.acthis.2023.152114>
- Ruzanna A. Shushanyan, The evaluation of mast cells, TNF- $\alpha$  expression and TUNEL-positive neurons in the brain during inflammatory response induced by acute hypobaric hypoxia, *Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences* 2024, 58 No. 1 (263):86-94. <https://doi.org/10.46991/PYSU:B.2024.58.1.086>
- Ruzanna A. Shushanyan, Nikolay V. Avtandilyan, Anna V. Grigoryan, Anna F. Karapetyan, The role of oxidative stress and neuroinflammatory mediators in the pathogenesis of high-altitude cerebral edema in rats, *Respiratory Physiology & Neurobiology*, 2024, 326, 104286. <https://doi.org/10.1016/j.resp.2024.104286>

2. **Ռուզաննա Հրայրի Գևորգյան** - կենդանաբանության ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ԵՊՀ Կենսաբանության գ/հ ինստիտուտի կենդանաբանության լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Ս.Ա. Աղայան:

2023-2024թթ. ընթացքում շարունակվել է ՀՀ որոշ մարզերից գյուղատնտեսական կենդանիների արյան և շիճուկի նմուշառում, որոնք վերլուծվել են ELISA մեթոդով: Վերջինիս դրական արդյունք ստացած նմուշներից անջատվել է ԴՆԹ: Իրականացվել է գենոտիպավորում և որոշվել են Հայաստանում շրջանառվող տոքսոպլազմայի գենոտիպերը: Այժմ իրականացվում է հետազոտության արդյունքում ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն՝ օգտագործելով համապատասխան կիրառական ծրագրերի փաթեթներ, ինչպես նաև ատենախոսության ձևակերպում:

Տպագրության է ուղարկվել հոդված PLOS ONE, «Toxoplasmosis in natural ruminant populations of ungulates: A systematic review and meta-analysis»:

Պատրաստվում է տպագրության համար ևս երկու հոդված:

3. **Տաթևիկ Լեոնիկի Հարությունյան** - կենդանաբանության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կենդանաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա. Ս. Ղազարյան:

Հաշվետու տարում ասպիրանտը մասնակցել է ԵՊՀ-ում նախատեսված դասընթացներից 9-ին և հավաքել 36 կրեդիտ: Իրականացրել է դաշտային աշխատանքներ՝ նմուշառվել 15 կենդանի, ձայնագրվել 3456 ուլտրաձայն: Մասնակցել է Wildlife Acoustics ընկերության կողմից կազմակերպված դասընթացներին՝ առցանց տարբերակով: Պատրաստվել է 2 թեզիս, որոնցից մեկը ներկայացվել է Թբիլիսի քաղաքում կազմակերպված կենսաբազմազանությանը նվիրված գիտաժողովին (2023), իսկ երկրորդը կներկայացվի Իսպանիայի Տառոագոնա քաղաքում իրականացվող Չղջիկների ուսումնասիրության Եվրոպական գիտաժողովին (EBRS) սեպտեմբեր ամսին:

4. **Հասմիկ Վարդանի Վարդումյան** – էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյան:

Հաշվետու տարվա ընթացքում հաստատվել է գիտական հետազոտության փոփոխված թեման՝ «ՀՀ որոշ հանքարդյունաբերական շրջանների ծանր մետաղներով աղտոտվածության գնահատումը և բարելավման ուղիները»:

Գնահատվել է *Medicago lupulina* բույսի ֆիտոտեմեդիացիոն պոտենցիալը՝ հողի նմուշը վերցվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի



շրջակայքից: Տվյալների հիման վրա տպագրվել է մեկ հոդված (*Egyptian Journal of Soil Science: Web of science ESCI-1,5*):

Իրականացվել է ծանր մետաղներով հողերի աղտոտվածության որոշում Լոռու մարզի հանքարդյունաբերական շրջաններից նմուշառված հողերում: Տվյալների ճշգրտությունը ստուգելու և ապացուցելու նպատակով նախատեսվում է ևս մեկ անգամ իրականացնել հողերում ծանր մետաղների որոշում:

Հաշվետու տարվա ընթացքում մասնակցել եմ «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» պարտադիր դասընթացին՝ 4 կրեդիտ, ընդամենը կուտակված՝ 35 կրեդիտ:

5. **Գոհար Համլետի Մարգարյան** - էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյան:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են ինչպես դաշտային, այնպես էլ լաբորատոր ուսումնասիրություններ, մասնավորապես ուսումնասիրվել և գնահատվել է Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջանների հողերի աղակալվածության աստիճանը: Տվյալների հիման վրա պատրաստվել են թեմատիկ քարտեզներ: Լաբորատոր ուսումնասիրություններին հաջորդել են վեգետացիոն փորձերը: Գնահատվել է *Amaranthus retroflexus* L. բուսատեսակի ֆիտոդետալիզացիոն պոտենցիալը՝ որպես աղակալված հողերի բարելավման մեթոդ: Տվյալների հիման վրա պատրաստվել է 4 հոդված, որոնք տպագրվել են հետևյալ ամսագրերում՝

1. Chenopodium album L.: a promising NaCl accumulating and tolerant plant for mitigation of salinity stress (Revista Brasileira de Botanica),
2. Advancing Agricultural Resilience in Ararat Plain, Armenia: Utilizing Biogenic Nanoparticles and Biochar under Saline Environments to Optimize Food Security and Foster European Trade (Egyptian Journal of Soil Science),
3. SOIL SALINIZATION IN THE AGRICULTURAL LANDS OF ARMAVIR AND BAGHRAMYAN REGIONS (ԵՊՀ Գիտական Տեղեկագիր),

4. Էջմիածնի տարածաշրջանի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների աղակալվածության աստիճանի գնահատումը (Հայաստանի Կենսաբանական Հանդես):

Երեք հոդված գտնվում է տպագրման փուլում: Հաշվետու տարվա ընթացքում մասնակցել եմ նաև անգլերեն լեզու դասընթացին և հավաքել 4 կրեդիտ (գումարային 32 կրեդիտ):

6. **Աննա Սամվելի Հարությունյան** - էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյան:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են ինչպես դաշտային, այնպես էլ լաբորատոր ուսումնասիրություններ, մասնավորապես ուսումնասիրվել և կատարվել է Արմավիրի տարածաշրջանի ստորերկրյա ջրերի ոռոգելի հատկությունների գնահատում, որին նախորդել է Էջմիածնի տարածաշրջանի ստորերկրյա ջրերի ոռոգելի հատկությունների գնահատումը: Տվյալների հիման վրա պատրաստվել են թեմատիկ քարտեզներ: Լաբորատոր ուսումնասիրություններին հաջորդել են վեգետացիոն փորձերը: Գնահատվել է մի շարք մշակաբույսերի մասնավորապես՝ ցորենի, գարու, վարսակի և հաճարի դիմացկունությունը աղակալված հողերում և ֆիտոդեսալինիզացիոն պոտենցիալը: Տվյալների հիման վրա տպագրվել են 2 գիտական հոդված՝ *Egyptian Journal of Soil Science 2024* (0459-483) և *Applied Ecology and Environmental Research 2023* (4853-4882) միջազգային ամսագրերում: Դրան նախորդել է Հայաստանի կենսաբանական հանդեսում (2023 13-21) տպագրված 1 հոդված, ինչպես նաև 1 թեզիս, որը ներկայացվել է FAO-ի կազմակերպած գիտաժողովում, ևս 1 հոդված տպագրման փուլում է:

Հաշվետու տարվա ընթացքում մասնակցել եմ նաև հետևյալ դասընթացներին և հավաքել գումարային 29 կրեդիտ:

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն – 4 կրեդիտ
2. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ – 4 կրեդիտ
3. Գիտության փիլիսոփայություն – 6 կրեդիտ
4. Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն – 3 կրեդիտ
5. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում – 3 կրեդիտ
6. Կայուն զարգացում և գլոբալ մաքտահրավերներ – 6 կրեդիտ
7. Համալսարանական դասվանդման դիդակտիկա – 3 կրեդիտ

7. **Մարգարիտա Գևորգի Մկրտումյան** - բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ. Նանագույան:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է թեմայի վերաբերյալ համապատասխան գրականություն և կատարել փորձեր: Արդյունքները ներկայացվելու են հոդվածի տեսքով, ինչի հետ կապված աշխատանքները գտնվում են նախապատրաստական փուլում: Ասպիրանտը մասնակցել է հետևյալ դասընթացներին «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» և հավաքել է 4 կրեդիտ, «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն»՝ 3 կրեդիտ, «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն»՝ 4 կրեդիտ, «Մարդկային

և նյութական ռեսուրսների կառավարում»՝ 3 կրեդիտ, «Անձնային աճ և ինքնակարգավորում»՝ 3 կրեդիտ, «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ»՝ 5 կրեդիտ, «Համալսարանական դասավանդման դիդակտիկա»՝ 3 կրեդիտ և հավաքել ընդհանուր 25 կրեդիտ:

8. **Լիանա Մանվելի Վանյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան:

Ասպիրանտը պարտադիր և ընտրովի դասընթացներից հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակ (32) և տպագրել է 2 հոդված և 2 թեզիս: Ներկայացվել է տպագրության 1 հոդված և 2 թեզիս:

9. **Մերի Կարենի Իսկանդարյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան:

Ասպիրանտը պարտադիր և ընտրովի դասընթացներից հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակ (32) և տպագրել է 2 հոդված և 4 թեզիս: Ներկայացվել է տպագրության 2 ևս թեզիս:

10. **Հռիփսիմե Հովիկի Պետրոսյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան:

Ասպիրանտը հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակ (32) և տպագրել է 1 թեզիս: Ներկայացվել է տպագրության 1 հոդված և 2 թեզիս:

11. **Սիլվարդ Կարենի Թադևոսյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ն. Ժ. Սահակյան:

Հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտը պարտադիր և ընտրովի դասընթացներից հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակ (32) և տպագրել 1 հոդված: Ներկայացվել է տպագրության 2 թեզիս:

12. **Թամարա Էդուարդի Աբադյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոչունյան:

Հաշվետու տարվա ընթացքում պարտադիր և ընտրովի դասընթացներից ասպիրանտը հավաքել է 29 կրեդիտ և տպագրել 1 հոդված, 2 թեզիս: Ներկայացվել է տպագրության 2 թեզիս:



13. **Տիգրան Մակեդոնի Ալեքսանյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ, գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի. Լ. Բագուկյան:

Հաշվետու ժամանակահատվածում Ս. Մ. Ալեքսանյանը իրականացրել է հսկայական հետազոտական աշխատանք, որը անմիջական կապված էր բուժառուների (թվով 68) փորձարկվող նմուշների արագ ուսումնասիրության հետ: Բոլոր նմուշներից մեկուսացվել է 240 մաքուր շտամ, որոնք ուսումնասիրվել են ըստ դրանց անտագոնիստական ակտիվության դրսևորման լայն սպեկտրի բակտերիաների և խմորասնկերի դեմ: Ընդ որում խմորասնկերից օգտագործվել են նաև այն շտամները, որոնք մեկուսացվել են հիվանդներից: Այս աշխատանքի իրականացման ընթացքում Տիգրան Ալեքսանյանը իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել բակալավրի ուսանողների ավարտական աշխատանքների (թվով 3) և մագիստրոսական թեզերի (թվով 3) պատրաստման գործընթացում:

**Տիգրան Ալեքսանյանը ունի 5 տպագրված աշխատանքներ:**

Տպագրվել է 2 հոդված, որից մեկը Elsevier տպագրության կողմից հրատարակված ծավալուն գրքի գլուխ է և հաշվարկվել է որպես **Q4 ամսագիր**:

1. Aleksanyan T., Hakobyan L. (Lusine), Dimov S., Haertle՝ T., and Bazukyan I. (2024) “Important properties of lactic acid bacteria and their role in industry” Chapter 1, in “Microbial Essencialism” book, 1st Ed. Raghvendra Pratap Singh, Geetanjali Manchanda, Sreedevi Sarsan, Ajay Kumar, Hovik Panosyan, Language: English, ISBN: 9780443139321, p. 1-46.

**Երկրորդը Q2 ամսագրում**

2. Bazukyan I.L., Rostomyan A.V., Hovhannisyan A.G., Aleksanyan T.M., Hakobyan L.L., Dallakyan A.M., Haertlé T. (2022) The effects of UV, gamma- and X-ray irradiation on the growth, antibacterial activity and radio-protective of *Lactobacillus rhamnosus*. Letters in Applied Microbiology. V. 75, Issue 5, p. 1151-1159. <https://doi.org/10.1111/lam.13779>

**Տպագրվել է 3 թեզիսներ**

3. 2018 թվականին, Ս. Ալեքսանյանի կատարված գիտական աշխատանքը ներկայացվել է «Towards a *Redox Healthy Aging*» WGs Meeting of the NutRedOx COST Action CA16112 գիտաժողովում:
4. 2024 թվականին Հունիսի 22-25 Հռոմում կայանալիք “International Human Microbiome Congress 2024” համաժողովում
5. Ինչպես նաև իր աշխատանքը ներկայացվել է BioMetals 2024 աշխատաժողովում, որը տեղափոխվել է 2025 թ.:

Տիգրան Ալեքսանյանը 2021թ. հոկտեմբերից մինչ օրս աշխատում է որպես կատարող ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում գործող ՀՀ ԳԿ 21T-2I019 ծածկագրով «Հայաստանի հանրապետության տարածքում բնակվող տարբեր էթնիկական խմբերի հեշտոցային միկրոբիոմի կենսաբազմազանությունը և կաթնաթթվային բակտերիաների ազդեցությունը սեռահասուն կանանց առողջության վրա» գիտական թեմայի շրջանակներում:

Ասպիրանտի կողմից 2023-ի հոկտեմբերից իրականացվում է «Հեշտոցային միկրոբիոմից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների պրոբիոտիկ հատկությունների ուսումնասիրությունը» ասպիրանտական նախագիծը:

Ընդգրկվել է նաև երկու նոր ներկայացված նախագծերի աշխատանքային խմբում, որպես կատարող:

2021թ մինչ օրս աշխատում է (աշխատանքային պայմանագիր) «Մի Էս Էս» ՄՊԸ ԱՄՆ ապահովագրական կազմակերպությունում:

Տիգրան Ալեքսանյանը ծավալել է նաև ակտիվ հասարակական գործունեություն:

- 2012-2016 – եղել է կամավորական «Հայաստանի անտառներ» Հասարակական կազմակերպությունում:
- 2023թ օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 16-ը ընկած ժամանակահատվածում մասնակցել է IBG ESC 1 «Բրոտալ ամրոց և համայնք» միջազգային աշխատանքային ճամբարին (Գերմանիա):
- 2023 թվականից հանդիսանում է կամավոր Հայաստանի կամավորականների ծառայությունում:
- Հայաստանի մանրէաբանների ասոցիացիայի անդամ է:

Ազատ տիրապետում է Անգլերեն (TOEFL 103 միավոր), Գերմաներեն, Հուներեն լեզուներին, սկսնակ է Թուրքերենի լեզվի իմացության մեջ:

2018-2020թ ծառայել է Հայկական բանակում, ունի սերժանտի կոչում:

Կենսաբանության ֆակուլտետի դեկանը իր խոսքում նշեց, որ Տիգրան Ալեքսանյանը իրականացրել է ծավալուն հետազոտական աշխատանք, սակայն չի մասնակցել ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերի դասընթացներին: Ասպիրանտը պարտավորվեց երկրորդ կուրսի առաջին կիսամյակի ընթացքում լրացնել բացը և հավաքել նախատեսված կրեդիտները, ինչը ընդունվեց գիտական խորհրդի նախագահի և անդամների կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով այն, որ հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտների կողմից կատարվել են պլանով նախատեսված աշխատանքները



և ամբիոնների կարծիքները՝ ատեստավորել առկա ուսուցմամբ  
ասպիրանտներին:

2. ԼՄԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից  
կազմակերպված մրցույթներին հայտ ներկայացրած նախագծերի  
երաշխավորության հարցը:

Մասնավորապես, ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և  
Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից  
անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի  
աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» միջազգային մրցույթին  
մասնակցության համար հայտ ներկայացրած կենսաբանության ֆակուլտետի  
դեկան, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.դ.  
«Կենսաբանություն» ԳՀԻ Կիրառական կենսաբանության և Էկոլոգիայի  
լաբորատորիայի առաջատար գիտաշխատող Կարեն Արամայիսի Ղազարյանի  
«ԿԶՆ-ների հասնելու համար «կանաչ» և «խելացի» լուծումներ  
հանրաքայունաբերական շրջանների ծանր մետաղներով (ՕՄ) աղտոտված հողերի  
առողջության կառավարման նպատակով» գիտական թեմայի երաշխավորության  
հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, Էկոլոգիայի և բնության  
պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ. Ա. Ղազարյանը: Նա նշեց, որ  
գիտական թեման արդիական է, ունի միջգիտակարգային բնույթ, վերաբերում է  
այնպիսի կարևորագույն Էկոլոգիական հիմնախնդիրների, որոնք խիստ  
արդիական են ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ողջ  
աշխարհում: Այն հիմնականում կենտրոնացած է կայուն զարգացման նպատակների  
վրա, որոնք սահմանված են Միավորված ազգերի կազմակերպության կողմից՝  
կապված կայուն գյուղատնտեսության և շրջակա միջավայրի կառավարման հետ:  
Նախագծի նպատակը ունի երկակի ուղղվածություն և կարող է լուծել ծանր  
մետաղների հետ կապված Էկոլոգիական խնդիրները. առաջին հերթին՝  
օգտագործելով նանոպարարանյութեր ֆիտոռեմեդիացիայի ընթացքում  
կարգավորվելու է ծանր մետաղների տեղափոխման գործընթացը հողից դեպի  
բույսեր (օգտագործվելու են վայրի և տեխնիկական գյուղատնտեսական բույսեր), և  
երկրորդ՝ այս բույսերի գյուղատնտեսական թափոնները ֆիտոռեմեդիացիոն  
գործընթացից հետո կօգտագործվեն միկրոտարրերի (մասնավորապես պղինձի և  
մոլիբդենի) անբավարար քանակ ունեցող գյուղատնտեսական հողերում:

ՈՐՈՇԵՅԻՆ՝ Երաշխավորել «ԿԶՆ-ների հասնելու համար «կանաչ» և «խելացի» լուծումներ հանքարդյունաբերական շրջանների ծանր մետաղներով (ՕՍ) աղտոտված հողերի առողջության կառավարման նպատակով» գիտական թեմայի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի մրցույթ – 2025» հայտերի մրցույթին մասնակցության համար:

Նիստին քննարկվեցին ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության և գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթների վերաբերյալ հարցեր: Նշվեց, որ մրցույթներին հայտեր են ներկայացնելու ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀԻ լաբորատորիաները:

3. ԼՍԵՅԻՆ՝ Ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհրդների կողմից մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման և էլեկտրոնային համակարգում մուտքագրելուց հետո տվյալների փոփոխման վերաբերյալ հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՅԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, ով ներկայացրեց տեղեկատվություն SuperVision և e-learning.yzu.am համակարգերում մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների տվյալների փոփոխման ժամկետների մասին: Կ. Ղազարյանը նշեց, որ ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի, մագիստրոսական թեզի վերնագիրը կարելի է խմբագրել կամ ղեկավարին փոխել մինչև ավարտական կիսամյակի մեկնարկը այն դեպքում եթե առկա է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի համապատասխան հիմնավորումը: Հետևաբար անհրաժեշտ է սեղմ ժամկետում ներկայացնել համապատասխան փաստաթղթերը փոփոխություններ կատարելու համար:

Գիտական խորհրդի նիստի ավարտին քննարկվեցին կազմակերպչական բնույթի որոշ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Ի.Վ. Շահազիզյան

